



Մամուլի հաղորդագրություն

10. 08. 2020 թ.

«Մի գավաթ բարություն». Քոֆիշոփ քոմփնին աջակցում է ՔՈԱՖ-ին

«Քոֆիշոփ քոմփնի» սրճարանների ցանցից գնված ամեն գավաթ սուրճը կամ որևէ այլ ըմպելիք, որ հաճախորդը տանում է իր հետ, ներդրում է լինելու «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին (ՔՈԱՖ):

Այդ տարբերակով գնված յուրաքանչյուր գավաթ սուրճի և այլ ըմպելիքների վաճառքից ամեն ամիս գումար է փոխանցվելու հիմնադրամին, որը ծառայելու է ՔՈԱՖ-ի շահառու գյուղերում իրագործվող որոշակի ծրագրի:

«Դժվար ժամանակները միավորում են լավ մարդկանց՝ հիմք դնելով բարենպաստ համագործակցության: «Քոֆիշոփ Քոմփնի» սրճարանների ցանցը շատ ոգևորված է այս նախաձեռնությամբ՝ նպատակ ունենալով զարգացնել գյուղաբնակ համայնքներում երեխաների կրթական ու մշակութային կյանքը: Մենք վստահ ենք, որ այս համագործակցությունը մեծ ռեֆորմների տանող երկար ճանապարհի առաջին քայլն է», - ասաց «Քոֆիշոփ Քոմփնի» սրճարանների ցանցի հիմնադիր Արման Գևորգյանը:

Օգոստոսի 3-ին «Քոֆիշոփ Քոմփնի»-ն բացեց արդեն իր 5-րդ սրճարանը Երևանի Թումանյան փողոցում, իսկ օգոստոսի 10-ից սկսվում է «Մի գավաթ բարություն» բարեգործական ակցիան: Հաճախորդը ծրագրի մանրամասներին կարող է ծանոթանալ՝ բաժակի վրայի QR կոդի (անգլ.՝ արագ արձագանք) միջոցով այցելելով [համագործակցության մասին պատմող էջ](#):

«Սարոյանական «Մի գավաթ բարության» խորհրդով իրագործվող համագործակցությունը նոր խոսք է ՔՈԱՖ-ի համայնքների երեխաների համար. կարևոր և ուսանելի է տեսնել, թե ինչպես է կայացած և հաջողակ բիզնեսը ձեռք մեկնում գյուղական համայնքներին՝ նպաստելով երեխաների կրթությանն ու առողջ ապրելակերպին: Դա նաև ներշնչում է գյուղաբնակ երիտասարդներին արդեն այսօրվանից մտածել ու գործել սեփական համայնքների զարգացման ու բարեկեցության ուղղությամբ», - նշեց ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը:

Երկու կազմակերպությունները մեծապես կարևորում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նման նախաձեռնությունները՝ հույս հայտնելով, որ պիլոտային այս համագործակցությունը վերածվելու է երկարատև գործընկերության՝ ի նպաստ Հայաստանի գյուղերում երեխայակենտրոն ծրագրերի իրագործման:



CHILDREN
OF ARMENIA
FUND



«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով:

Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: